

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Ն Ի Ք

Աստուածաշնչի ընկերութեան հասարակութեանը յիշե-  
լորդ Գրեգորի:

Խեղ մը ատեն է որ ընկերութիւնը իր հաստա-  
տութեանը յիսներորդ տարւոյն յորեկնին հան-  
դէսը մեծ ժողովքով կատարեց . և ժողովքին  
բազմութեան գլուխն էր Լոնտոնի Լուս. քաղաքա-  
պետը: Եւ ընկերութեան նախագահը՝ որ է  
Շէյֆերսսի կոմսը, շատ միտք համոզող ճառ մը  
խօսեցաւ . վասն զի նոյն իսկ ճառախօսը կ'երևայ  
թէ կը խոստովանի որ, այս իրենց սպառած ա-  
տուածաշունչները աշխարհքիս ամէն կողմը տա-  
րածելով, կրօնականէն զատ աւելի քաղաքական  
վախճան մը կը դիտեն . որովհետեւ այս ճամբով  
կ'ուզէ տարածել « Զհոգին ազատ քաղաքակա-  
նութեան » . այսինքն պէտք է հասկընալ ԱՊգրի-  
կան Գաղատիականութեան:

Այս հանգիսին մէջ արուած տեղեկութիւննե-  
րէն յայտնի կ'ըլլայ որ Բրիտանիոյ և ուրիշ տե-  
ղւոյ Ատուածաշնչի ընկերութեան անդամնե-  
րուն թիւն է հիմա 8,332 հոգի: Եւ ընկերու-  
թեան հաստատուէն մինչև հիմա բաժնուած ա-  
տուածաշունչներուն թիւն է երեսունըմէկ միլիոն:  
Իսկ այսչափ ժամանակին մէջ անոնց վրայ եղած  
ծախքը ինըտուներկը միլիոն Ֆրանգի կը հասնի:  
Իսկ այս երեսունըմէկ միլիոնին միայն 18 միլիոնը  
մեծն Բրիտանիոյ և Իռլանտիոյ մէջ ցրուած է,  
17ը Եւրոպիոյ և Ամերիկայի այլ և այլ քաղաք-  
ները . 2 միլիոնը դանազան տեղուանք գտուող

հրէից, Մահմետականաց և հեթանոսաց մէջ: —  
Այս ընկերութիւնը Սինէպոլոց խառնութիւնը  
իրեն մի միայն առիթ առնելով, կ'ուզէր միլիոն մը  
ատուածաշունչ Սինէպոլոց լեզուով տպած՝ ա-  
նոնց ձրի բաշխելու: Եւ այս գործքիս յաջողու-  
թեանը համար ընկերութիւնը իրեն բարեկամացը  
ձեռնառուութիւնը կը խնդրէ: Ինչուան հիմա ըն-  
կերութիւնը իր ջանքովը 170 լեզուով բողոքական  
ատուածաշունչի թարգմանութիւնը ըրած ունի:

Ահա այսպիսի է Լոնտոնի ընկերութիւններէն  
մէկին միայն անչափ գործունէութիւնը:

Զայս հաստուածը կը բերէ Բարեւոյ՛մ կրօնի ըսուած  
օրագիրը, ու ետեւէն կ'աւելցնէ զայս խօսքս, թէ  
« Այս գործքերը, ըստ ինքեան նշանական, մեր  
ուղղափառ կրօնին համար օրինակ առնելու գաս  
մը չեն մի »:

Ես ալ զնոյնը կ'ըսեմ մեր ազգայնոց . ուր է  
միաբանական սէրը ուղղափառ կրօնը ծաղկեցը-  
նելու մէջերնիս:

Մարտոյը ողորմութեանը լաւած գոհ կ'երեւայ:

Ամբշկոտ մուրացիանին մէկը կ'երթայ ողորմու-  
թիւն կ'ուզէ խեղճ մարդէ մը: Մարդը զարմա-  
նալով մը կը գառնայ, Բարեկամ, կ'ըսէ, լա-  
գտար ողորմութիւն ուղղելու մարդդ . գիտնաս որ  
թէ որ դու ինձմէ չուզէիր, ես քեզմէ պիտի  
ուզէի:

ԿԵՂՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգային դաստիարակութեան հարկաւոր մա-  
սանց մէկն ալ է սովորեցընել աղոց մտքերնին սրել,  
տեսած և լսած բաներնուն վրայ անդրադարձու-  
թիւն ընելը գիտնալ, որով կարենան ընարութիւն  
ընել ամէն բանի մէջ . և ամէն տեսածէն և լսածէն  
չխաբուիլ . այլ բանի մը շիտակ միտքը հասկընալու  
ջանալ . մէկ խօսքով, արթնութիւն ունենալ ամէն  
գործքերնուն և խօսքերնուն մէջ: Արդ դաստիա-  
րակութեան այս մասին մէջ կը թուելու մեծապէս  
կ'օգնէ կեղծագրութիւնը, որ է գրոյ տեղ այլ և

այլ իրաց պատկերները գործածել ու անոնց նշա-  
նակութիւններովը ձևացընել մէկ իմաստի մը բա-  
ռերը, որ կարգալ ուզողը ճարտարմտութեամբ  
գտնէ ու իմաստը հանէ: Ուստի որչափ ալ անյար-  
մար և դժուարին է մեր լեզուին բառերուն կեղ-  
ծագրութեան յարմարելը բաղաձայններուն յա-  
ճախութեանը պատճառաւ, յաղթելով դժուա-  
րութեանց կը ջանանք այս տեսակ գրութեան ալ  
ճաշակը տալ մեր սիրելի ազգայնոց՝ յամենայնի  
ազգային դաստիարակութեան օգնելու փափաքով:

Ա.



ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ